



Քաղաքականության
ամփոփագիր
Նոյեմբեր, 2011



Անհատի իրավունք, հասարակության ընտրություն: Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում տեղահանվածների իրարամերժ ժառանգությունը

Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետևանքով ավելի քան մեկ միլիոն մարդիկ թողել են իրենց բնակավայրերը: Խաղաղության ցանկացած համաձայնագիր պետք է ամրագրի այս ժառանգությունը և ողջամիտ հնարավորություններ ստեղծի իրականացնելու վերադարձի իրավունքը կամ ստանալու այլընտրանքային փոխհատուցում, որոնք կարևոր գործոն են լինելու պայմանագրի լեգիտիմության համար:

Տեղահանումներից 20 տարի հետո արդարության իրավունքի իրականացումը պետք է ստանա այլ ձև, որը պայմանավորված կլինի նրանով, թե տեղահանված անհատը կամ նրանց հետնորդները ինչպես են ցանկանում վերագտնել իրենց: Սակայն այսօր հակամարտության մեջ ներգրավված հասարակությունների որոշումները սահմանափակում են տեղահանվածների իրավունքների ամբողջական իրականացումն ապագայում: Այժմ իրականացվող առավել զգալուն քաղաքականությունը

կարող է ապագայում պաշտպանել այդ իրավունքների ամբողջությունը: Մա կլինի ներդրում վերջնական խաղաղության լեգիտիմության մեջ՝ ի շահ բոլոր կողմերի՝ թույլ տալով ապահովել արդարությունը դարաբաղյան հակամարտության բոլոր տեղահանվածների համար:

Այս քաղաքական համառոտագրի խնդրո առարկան տեղահանվածների խնդիրների երկընտրանքն է: Թեև նախահակամարտային ժողովրդագրությունը և բնակեցության ձևերը հնարավոր չէ նորից ստեղծել կամ վերականգնել, սակայն ցանկացած խաղաղության պայմանագիր, որին չի հաջողվի իրական հիմքեր ստեղծել տեղահանվածների որոշակի չափով վերադարձի համար, կդիտվի ոչ լեգիտիմ տեղահանվածների կամ միջազգային հանրության կողմից:

Մարդասիրական խնդիրները 1999-2000-ական թթ. գերիշխում էին ադրբեջանցի և հայ տեղահանվածների

մասին քննարկումներում: Չնայած այդ քննարկումները դեռևս դուրս չեն մղվել, սակայն տեղահանվածների խնդիրը աստիճանաբար դարձել է այն քաղաքականացված ու փոխկապակցված խնդիրներից մեկը, որոնք վտանգված են ԼՂ կարգավորման գործընթացում: Վերջին տարիներին տարհանվածների մասին բանավեճերը սկսել են ցույց տալ մրցակցային միտումներ՝ ազդելով հակամարտության դժվարությունների վրա: Մասնավորապես, գրոյական ելքով վերադարձի հեռանկարնր, որը մարդկանց ֆիզիկական վերդարձը հավասարեցնում է տարածքների նկատմամբ քաղաքական իրավասության, հակասում է նոր իրավիճակի ստեղծման գործոններին՝ բացառելով վերադարձի տարբերակը: Հետևաբար, վերադարձի մասին բանավեճերը հեռու են լինում ներկայիս մարտահրավերներից և հակազդում են տեղահանվածների ընտրության իրավունքին, որն էլ արտացոլում է, թե ինչպես տեղահանվածների հարցը չի օգտագործվում որպես խաղաղության գործընթացի վրա ազդելու միջոց:

Վերադարձի մասին քննարկումները և դրա այլընտրանքները պետք է վերաձևակերպվեն՝ տեղահանվածների իրավունքները դարձնելով օրակարգային: Այս իրավունքների հետագա իրականացումը պետք է պաշտպանված լինի մեր օրերում կատարվող հասարակական ընտրություններից, որոնք փակուղու մեջ են դնում արդարության ուղիները: Մա մի ներդրում է, որը կարող է կատարվել այսօր՝ հնարավոր և լեգիտիմ դարձնելով հետագա վերադարձի գործընթացը: Այդ ելքը կենսական կլինի հայ-ադրբեջանական երկարատև հաշտության համար:

1. Բռնատեղահանվածները Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում

1988 ու 1994 թթ միջև ընկած ժամանակահատվածում ավելի քան մեկ միլիոն մարդիկ կորցրել են իրենց բնակավայրերը Լեռնային Ղարաբաղի վերահսկման համար հայերի ու ադրբեջանցիների միջև հակամարտության պատճառով: Չնայած թվային առումով ավելի շատ ադրբեջանցիներ են տեղահանվել, սակայն համամասնական առումով հայկական ու ադրբեջանական համայնքները հավասարապես տուժել են:

Ադրբեջանում, ուր ամենաքիչն են շահագրգռված ստատուս քվոյի պահպանմամբ, տեղահանված մարդկանց վերադարձը դիտվում է որպես կարևոր բաղադրիչ տարածքները ադրբեջանական իրավասության ներքո վերադարձնելու համար: Ադրբեջանն իր պահանջներում հիմնականում կենտրոնանում է ադրբեջանցիներին տեղահանված անձանց ԼՂ վերադարձի վրա՝ չկենտրոնանալով փախստականների հետ կապված

հարցերի վրա: Չնայած փախստականների ու ներքին տեղահանվածների վիճակը բարելավելու ուղղությամբ շատ բան է կատարվել՝ մասնավորապես վերջիններիս համար, սակայն բազմաթիվ խոչընդոտներ գոյություն ունեն ադրբեջանական հասարակությունում նրանց ինտեգրվելու համար: Ինտեգրացիան դիտվում է որպես ստատուս քվոյի ընդունում՝ խափանելով վերադարձի իրավունքը և կորցնելով այն լծակը, որը ենթադրաբար բխում է մեծ թվով տեղահանված դժբախտ բնակչության առկայությունից:

Քանի որ Հայաստանում ու Լեռնային Ղարաբաղում ավելի գոհ են ստատուս քվոյից, զգալի ջանքեր են գործադրվել ինտեգրելու հայ փախստականներին ու ներքին տեղահանվածներին և ամբողջականացնելու էթնիկ սահմանազատումը: Այնուամենայնիվ, հայերը պահանջում են վերադարձի սիմետրիկ մոտեցում. ցանկացած ադրբեջանցի անհատի վերադարձի սցենարի դեպքում հնարավորություն տալ նաև ցանկացած հայի վերադառնալ Բաքու:

ԼՂ-ի շուրջ գրավյալ տարածքների բնակեցման ջանքերի համատարած լինելու ապացույցներ չկան, չնայած ԵԱՀԿ-ը դիտորդները 2010թ. նկատել են, որ այդ տարածքներում ապրում է մոտավորապես 14.000 մարդ՝ հիմնականում Լաչինում ու Քելբաջարում: Արդարության փաստարկները հայ տեղահանվածներն օգտագործում են որպես հիմնական հակակշիռ Ադրբեջանի պահանջների, քանի որ ստատուս քվոն ու տարածքային վերահսկողության ներկայիս ձևը մեծ թվով հայերի կողմից դիտվում է «ինքնին արդարություն»:

2. Տարհանման աշխարհագրությունը և դրա հետևանքները


Ղարաբաղյան հակամարտությունը տեղիք է տվել տեղահանման երեք հիմնական տեսակների, որոնցից յուրաքանչյուրը տարբեր հետևանքներ է ազդեցություն ունի վերդարձի, հատուցման և արդարության վերաբերյալ քննարկումների վրա:

Ա. Փախստականներ

Առաջին տեսակի մեջ է մտնում խորհրդային ժամանակաշրջանի Ադրբեջանում՝ ԼՂ տարածքից դուրս, հայ համայնքի զանգվածային տեղահանումը և ադրբեջանական համայնքի զանգվածային տեղահանումը Հայաստանից: Չնայած նրանց վերադարձի հավանականությունը կարգավորման ու հաշտեցման լայն գործընթացի շրջանակներում չի բացառվում, սակայն հակամարտության երկու կողմերում էլ քիչ մարդ է տեսնում փախստականների վերադարձը որպես հավանական հեռանկար: Ցանկացած հատուցման ծրագիր, որը փախստականներին ընտրության հնարավորություն կտա

Թեև թվերը մշտապես կասկածի տակ են դրվում և չեն կարող արտացոլել բարդ և փոփոխվող իրականությունը, այնուամենայնիվ՝ Ադրբեջանն ունի Հայաստանից տեղահանված մոտ 200.000 փախստականներ և մոտ 586.000 ներքին տեղահանված անձինք ԼՂ-ից և հարակից գրավյալ տարածքներից: Մոտ 360.000 հայեր ևս տեղահանվել են, ովքեր հիմնականում

փախստականներ են Ադրբեջանից: Չնայած այդ մարդկանց մեծ մասը մնացել է Հայաստանում, սակայն մի զգալի մասն էլ արտագաղթել է: Ադրբեջանից տեղահանված հայերն այսօր կազմում են ԼՂ-ի բնակչության զգալի մասը, նրանք զգալի թիվ են կազմում վերաբնակեցված գրավյալ տարածքներում:



Լեռնային Ղարաբաղում՝ նախկինում աղբբեջանցու, իսկ այժմ Բաքվից տեղահանված հայ ընտանիքի պատկանող տան ներքին հարդարանքը:

փոխարինելու վերադարձի իրավունքը կյանքի համար նախատեսված միջոցների հետ, կհանդիսանա այլընտրանք հակամարտության երկու կողմերի բնակչության համար:

Բ. «Անվիճարկելի տարածքներից» տեղահանումները
 Երկրորդ տեսակի մեջ են մտնում այնպիսի տարածքներից տեղահանումները, որոնք տեղահանման պահին բնակեցված էին մեկ հիմնական էթնիկ խմբի կողմից, և այդ տարածքի նկատմամբ ոչ մի էթնիկ խմբի կողմից տարածքային պահանջներ չեն ներկայացվում կամ հետպատերազմյան բնակեցված տարածք չեն հանդիսանում: Այս օրինակը կոնկրետ վերաբերում է ԼՂ շուրջ Աղբբեջանի դե յուրե 6 շրջաններին՝ Ջեբրայիլ, Քելբաջար, Ղուբաթլու, Աղդամ, Ֆիզուլի և Ջանգելան, որոնք նախապատերազմյան փուլում հիմնականում բնակեցված էին աղբբեջանցիներով: Այդ տարածքներ վերադարձը թվում է ըստ ամենայնի հավանական և իրագործելի, սակայն վերաբնակեցման հիմնական խոչընդոտ է հանդիսանում տնտեսական վերականգնումը: Մակայն հայերի արմատավորումն այս տարածքներում ժամանակի ընթացքում աճում է՝ ստեղծելով նոր դաշտային իրողություններ, որոնք կխոչընդոտեն այս տարածքներ վերադարձին: Կան նախանշաններ, որ երկարաժամկետ այս միտումը կարող է հանգեցնել «անվիճելի տարածքների» փոխակերպմանը՝ «վիճելի տարածքների»՝ լրջորեն ազդելով հակամարտության լուծման վրա:

Գ. «Վիճարկելի տարածքներից» տեղահանումները
 Երրորդ տեսակի մեջ է մտնում տեղահանվածների խնդիրը: Նախապատերազմյան շրջանում տեղահանվածների մեծամասնությունը լքել է այն քաղաքներն ու շրջանները,

որտեղ այժմ ապրում են հետպատերազմյան բնակիչները, և նրանցից շատերը հանդիսանում են տեղահանվածներ: Այս տարածքներն ունեն կարևոր աշխարհագրական դիրք: Գոյություն ունեն երեք «վիճարկելի տարածքներ»: Առաջինը Շուշի քաղաքն է (աղբբեջանական աղբբուրներում հայտնի է որպես Շուշա), որտեղ աղբբեջանցիները մեծամասնություն էին կազմում մինչ պատերազմը: Այն ունի ռազմավարական կարևոր դիրք ԼՂ կենտրոնում վերահսկելով Ստեփանակերտը (աղբբեջանական աղբբուրներում հայտնի է Խանքենդի անունով): Երկրորդը Լաչինն է (հայկական աղբբուրներում հայտնի է որպես Բերձոր), որն ունի աղբբեջանցի և քուրդ մեծամասնություն: Քաղաքը ռազմավարական կարևոր միջանցք-տարածք է, որը Լեռնային Ղարաբաղը կապում է Հայաստանին: Շուշին ու Լաչինը հանդիսանում են հետպատերազմյան շրջանում հայերով բնակեցված տարածքներ: Երրորդը ԼՂ-ի հյուսիսում գտնվող Շահումյանի շրջանն է, որն այժմ հանդիսանում Գերանբոյ շրջանի մաս: Այն միակ հայկական մեծամասնություն կազմող շրջան էր Աղբբեջանում, որը մինչ պատերազմը դուրս էր ԼՂ-ի տարածքից: Լինելով Աղբբեջանի վերահսկողության տակ հրադադարի ռեժիմի հաստատումից հետո՝ այն այժմ հիմնականում վերաբնակեցվել է տեղահանված աղբբեջանցիներով: Վիճարկելի տարածքների վերադարձը հանդիսանում է յուրահատուկ մարտահրավեր միջհամայնքային հաշտեցման գործընթացում, ինչը ենթադրում է, որ վերադարձողները ապրելու են այլ էթնիկ խմբերին մոտիկ, նույնիսկ այլ էթնիկ խմբում:

Յուրաքանչյուր սցենարի դեպքում այսօրինակ տարիանումը արդարության հարցի լուծման տարբեր պատասխաններ է պահանջում տեղահանված անձանց

համար: Պետք չէ ենթադրել, որ բոլոր տեղահանվածները ցանկանում են վերադառնալ: Հայաստանի ու Ադրբեջանի իշխանությունները կարիք չունեն սպասել խաղաղության համաձայնագրի կնքմանը, որպեսզի նախաձեռնեն քննարկումներ այն տեղահանված մարդկանց հատուցման խնդրի շուրջ, ովքեր չեն ցանկանում վերադառնալ և ուզում են նոր կյանք սկսել:

Այնտեղ, որտեղ վերադարձը համարվում է անիրագործելի, բաց քննարկում պետք է նախաձեռնվի վերադարձի այլընտրանքների մասին: Միևնույն ժամանակ տեղահանված անձանց համար արդարության մոդելի մշակման սցենարը պետք է կախված չլինի մասացած բոլոր սցենարների փաժամանակյա լուծումից: Անվիճարկելի տարածքներից փախստականների ու ներքին տեղահանվածների արդարության ձևավորումը պետք է կախված չլինի վիճարկելի տարածքներ վերադարձի լուծման հարցերից:

3. Հնարավորությունների պատուհաններ

Տեղահանված անձանց առկայությունը հակամարտության բոլոր կողմերին թույլ է տալիս հակամարտության շրջանակներում բարձրացնել նրանց իրավունքները, եթե դրանք համակողմանի ու փոխադարձ են: Մեկ կողմը չի կարող մերժել կամ կասեցնել վերադարձի իրավունքը, առանց, միևնույն ժամանակ, սեփական կողմի վերադարձի իրավունքի մերժման: Փոխադարձ ամրապնդման դինամիկան՝ ուղղված երկկողմ իրավունքներին ու դժգոհություններին, հնարավոր է, եթե ստեղծվի համընդհանուր շահագրգռվածություն այս հարցերի քննարկման համար: Որպեսզի այդ ամենը տեղի ունենա, անհրաժեշտ է ունենալ որոշակի պայմաններ.

- Տեղահանումը և վերադարձը պետք է ընկալել որպես համամարդկային խնդիր, որն ազդում է դարաբաղի հակամարտության հետևանքով բոլոր տեղահանված մարդկանց իրավունքների վրա, և կարևոր չէ, թե արդյո՞ք նրանք փախստականներ են, ներքին տեղահանվածներ, հայեր, ադրբեջանցիներ, մեսիտթցիներ, թուրքեր, քրդեր, թե այլոք:
- Վերադարձը իրավունք է, բայց ոչ պարտականություն: Պետք է հարգել տեղահանված անձանց վերադարձի իրավունքը, ինչպես նաև այս իրավունքի այլ իրագործումներ, ինչպիսին են փոխհատուցումը կամ վերաբնակեցումը: Վերադարձը կարող է լեգիտիմ լինել, եթե այն կամավորության վրա է հիմնված:
- Վերադարձը պետք է հասկանալ ոչ միայն որպես տեղահանվածի սեփական իրավունք, այլ նաև որպես մյուս կողմի վերադարձողին ընդունելու պարտականություն: Կողմերից ոչ մեկը չի նախաձեռնում քննարկումներ վերադարձողներին իրենց հասարակություններում ընդունելու ունակությունների մասին: Չնայած պնդումներ կան այն մասին, որ հայկական մի խոշոր համայնք շարունակում է ապրել Ադրբեջանում, սակայն էմպիրիկ ապացույցներ չկան: ԼՂ-ում համատեղ ապրելու հարցը սվիններով է ընդունվում՝ չնայած ոչ բացահայտ ձևով: Բանավեճ պետք է սկսել «հանդուրժող հասարակություններ» ստեղծելու համար՝ վերադարձի հարցերը կապելով կառավարման ու յուրաքանչյուր հանրության ներկայացվածության ապահովման ավելի ընդգրկուն խնդիրներին:

- Վերը նշվածներից որևիցե մեկն իրականացնելու համար պետք է վերացնել ռազմական հոետորաբանությունը և ուժի կիրառման սպառնալիքը, քանի որ ոչ մի բան ավելի շատ չի փաստում տեղահանվածների վերադարձի հեռանկարներին:

4. Ապագա ուղղություններ քաղաքականության մշակման համար

Ա. Կենտրոնանալ տեղահանված անհատների ներկայիս վիճակում առկա իրավունքների ու ընտրությունների վրա, դիտարկել այդ ամենը չլուծվող քաղաքական շրջանակներից առանձին:

Փախստականների ու ներքին տեղահանված անհատների վերաբերմունքի մասին ավելի շատ ակնկալիքներ կան, քան իրականում հայտնի են, քանի որ ենթադրությունները սովորաբար արտացոլում են հակամարտության կողմերի դիրքորոշումներն անզիջում քաղաքական շրջանակներում: Նոր տեղեկություններ են անհրաժեշտ հայ և ադրբեջանցի փախստականների և ներքին տեղահանված անձանց նախապատվությունների մասին: Տեղահանվածների հարցերով կառավարությունների քաղաքականությունը ավելի լեգիտիմ, ավելի արդյունավետ ու ավելի պատասխանատու կլինի, եթե այն արտացոլի տեղահանված անձանց սեփական տեսակետը: Փախստականները և ներքին տեղահանված անձինք պետք ավելի լավ տեղեկացվեն իրենց հասու այլընտրանքների մասին, այլ ոչ թե խրախուսվի այն հավատը, որ ազգային պահանջները տարածքների վերաբերյալ կախված են իրենց որոշումներից:

Բ. Պետք է ընդունել, որ տեղահանման տարբեր ձևեր պահանջում են տարբեր ռազմավարություններ՝ տեղահանված անձանց հնարավորություն տալով ընտրելու արդարության այն ձևը՝ փոխհատուցում, վերադարձ, վերաբնակեցում, որն առավել հարմար է նրանց:

Փախստականներն ու ներքին տեղահանված անձինք տարբեր համապատկերում են թողել իրենց բնակավայրերը, այդ իսկ պատճառով արդարության վերականգնումը նրանց համար տարբեր է լինելու: Հնարավոր է՝ որոշ փախստականներ արդեն եզրահանգել են, որ այլ վայրերում երկար տարիներ նոր կենսապայմաններ ստեղծելուց հետո վերադարձը իրենց նախկին բնակավայրեր, որպես էթնիկ փոքրամասնություն՝ քաղաքական զգայուն համատեքստում, այն չէ, ինչ իրենք ցանկանում են: Այն մարդկանց, ովքեր կայացրել են նման որոշում, պետք է հնարավորություն տրվի վերականգնելու արդարության այլ ձև, ինչպիսին է ֆինանսական փոխհատուցումը:

Նրանք, ովքեր որոշել են վերադառնալ, կունենան այլ կարիքներ՝ կախված իրենց անձնական վիճակներից: Քաղաքականություն մշակողներն այժմ պետք սկսեն մտածել այդ տարբերակաված կարիքների մասին: Ներքին տեղահանված անձինք և փախստականները, վերադառնալով այն իրավիճակին, երբ նրանք կողք կողքի ապրելու են այլ էթնիկ խմբերի հետ, պետք է

ստանան հատուկ նախապատրաստության ձև ու պաշտպանություն: 1980-ականների վերջի և 1990-ականների սկզբի իրավիճակները փոխվել են անճանաչելիորեն, և արդյունավետ նախապատրաստությունը պահանջելու է ճշմարիտ



Բարվից տեղահանված հայկական ընտանիքի դուստրերը, ովքեր այժմ ապրում են Շուշիում:

ու հավաստի տեղեկություններ վերադառնալու վայրի մարդկանց մոտեցումների ու քաղաքական իրավիճակի մասին: Փոխադարձ շփուժների և հայ-ադրբեջանական ազատ սահմանահատման վերականգնումն արդեն անփոխարինելի դեր կխաղան ներկայիս պայմաններում վերադարձի և հաշտեցման գործընթացի արդիականացման գործում:

Գ. Ապահովել ապրելու վայրի ընտրության իրավունքի ապագա իրականացումը այսօրվա հակամարտության ռազմավարության լայն նպատակների շրջանակներում

Հակամարտությանն առնչվող վերջին տարիների որոշ ռազմավարություններ ուղղակի հակասում են իրավիճակների այնպիսի զարգացմանը, որը վերադարձի հնարավորություն կստեղծի: Մշակութային ժառանգության ոչնչացումը կամ անուշադրության մատնումը համատեղ ապրելու վայր խորհրդանշող տարածքներում, վերաբնակեցման գործողություններով դաշտային նոր իրողությունների ստեղծումը, մշակութային սեփականության նոր պահանջների ձևավորումը գրաված տարածքների նկատմամբ, ապակողմնորոշող տեղեկությունները մյուս կողմի համայնքների վերաբերյալ և տեղահանման նկարագրելը՝ որպես միակողմանի խնդիր, հանդիսանում են նման ռազմավարության վառ օրինակներ: Այդ ռազմավարությունների հետապնդումը փոքրացնում է կառուցողական քննարկումների հնարավորությունը և տեղահանվածների հարցը դարձնում ավելի խոցելի շահարկման համար: Առանց այն գործողությունների, որոնք կմեղմեն այդ բացասական միտումները, տեղահանման հարցը կարող է դառնալ նույնիսկ առավել անլուծելի:

Մեղմացման ռազմավարությունները կարող են ներգրավել՝

- Այժմյան տեղահանված համայնքներում մշակութային ժառանգության համատեղ կառավարման հարցերում խորհրդանշական նորարությունները և ոչնչացման, անուշադրության մատնման կասեցումը կամ միակողմանի ղեկավարումը այդ վայրերի, որը նպատակ ունի փոխելու դրանց բնույթը:
- Վերաբնակեցման գործողությունների աջակցության կասեցում, տեղեկատվության հավաքագրման ու հանրային կրթական քարոզարշավի կազմակերպում վերաբնակիչների ու տեղահանված մարդկանց կարիքների ու իրավունքների մասին:
- Ազնիվ ու պատասխանատու հանրային քննարկումների կազմակերպումը վերադարձողներին ընդունելու Հայաստանի ու Ադրբեջանի հասարակությունների ունակությունների մասին և դրա դիտարկումը որպես կարևորագույն մաս խաղաղության պայմանագրի:
- Տեղահանված անձանց խմբերի այցերի կազմակերպումը դեպի համայնքներ, որտեղից նրանք տեղահանվել են:

Դ. Քննարկել ինտեգրացիան որպես տեղահանված անձանց հարցերի բարձրացման այսօրվա անհրաժեշտություն

Ադրբեջանում ինտեգրման տարուն պետք է ճեղքվի, որը որպես միջոց կապահովի փախստականների ու ՆՏԱ իրավունքները ու բարեկեցությունը: Այժմ տեղահանված անձանց բարեկեցության ապահովումը չպետք է կանխորոշի հետագա բնակության վայրի ընտրությունը: Տեղահանված վայրերում ինտեգրացիան չի ենթադրում վերադարձի իրավունքի չկայացում, սակայն այդ իրավունքը դարձնում է առավել իրատեսական՝ երկարաժամկետ

ներդրումներ կատարելով արժանապատիվ, հմուտ և վստահ վերադարձողների համար: Հանրային քննարկումները կարևոր են զսպելու վախերը առ այն, թե մարդկանց ինտեգրացիան տանելու է նրանց տեղահանված անձ լինելու իրավունքի կորստի:

Հայաստանի պարագայում բռնատեղահանվածների ինտեգրացիան որևէ տարածքում չպետք է հետապնդի այնպիսի նպատակ, որը կխախտի այդ տարածքներից տեղահանված մարդկանց արդարության իրավունքի սկզբունքները: Համապարփակ աշխատանքները պետք է թույլ տան քննարկելու տեղահանված բոլոր անձանց իրավունքները՝ առանց նրանց միջև հիերարխիայի:

Ե. Օրակարգային դարձնել վերադարձի ու փոխհատուցման կարիքները Հայաստանի ու Ադրբեջանի հասարակություններում, ինչպես նաև լայն կառավարման ու հաշտեցման գործընթացներում:

Երկկողմանի եւ վերադարձը, և փոխհատուցումը հասարակական հարաբերությունների ու գործառնության ինստիտուտների լայն շրջանակ են պահանջում, որպեսզի կարողանան աշխատել: Դրանք պետք է դիտվեն որպես ապագա տնտեսական զարգացման դրական կողմ, այլ ոչ թե կապված լինեն անցյալում կրած վիրավորանքների մասին միակողմանի պատուհանների հետ: Վերադարձը ենթադրում է բողոքի դիմումների քննարկման ու լուծման խորը գործընթացներ, որոնք վերաբերում են անցած անարդարությունների ու հաշտեցմանը, հատկապես այն վայրերում, որտեղ վերադարձողները ապրելու են մյուսների հետ: Այն նաև պահանջում է կառավարում ու սոցիալական ենթակառուցվածքներ, որպեսզի մարդիկ կարողանան վերադառնալ անվտանգ և արժանապատվությամբ, որը կպահանջի տեղում նախօրոք երկար աշխատանքներ կատարել: Փոխհատուցումը ենթադրում է ինստիտուտների ամբողջություն, որոնք ունակ են հաստատելու արդարություն, հետազոտական մտածողություն այլ հակամարտություններից լավագույն փորձը սովորելու, ինչպես նաև ինստիտուտներ և մեխանիզմներ ձևավորելու համար, որոնք կապահովեն արդարությունը:

Ներկայիս անարդյունավետ տեղեկատվական դաշտը, խաղաղ գործընթացի մասին ապատեղեկությունները և ոչ իրական ընկալումները, հայերի ու ադրբեջանցիների փոխադարձ մեկուսացումը և արդյունքում թշնամական կարծրատիպերի ժողովրդականությունը նպաստում են տեղահանված անձանց համար արդարությունը անորոշ ժամանակով հետաձգելուն: Հակամարտող կողմերի միջև շփման ռազմավարության նպատակը պիտի լինի նախկին հարևանների մերձեցումը, հարկ է մյուս կողմի հետ քննարկումներին մասնակից դարձնել տեղահանված անձանց, արդարության ու հաշտեցման քննարկումներում ընդլայնել մասնակցությունը: Այստեղ միջազգային դերակատարները կենսական դեր ունեն խաղալու՝ կիսելով իրենց փորձը, ստեղծելով երկխոսության միջավայր, ներդրում անելով նոր կարողությունների ստեղծման գործում ու զարգացնելով իրատեսական ակնկալիքները քաղաքական հնարավորությունների նախօրեին:

Քաղաքականության առանցքային ոլորտները

ա. Կենտրոնական ներկայիս իրավիճակում տեղահանված մարդկանց անհատական ընտրության ու իրավունքների վրա, որոնք կախված չեն լինի առանձին քաղաքական շրջանակներից:

բ. Ճանաչել, որ տեղահանման տարբեր օրինակներ պահանջում են տարբերակված ռազմավարություններ՝ հնարավորություն տալով տեղահանված մարդկանց ընտրել իրենց կարիքներին առավել համապատասխանող ձևի արդարությունը՝ վերաբնակեցում, վերադարձ, հատուցում:

գ. Ապահովել ապագայում ապրելու վայրը ընտրելու իրավունքի իրագործումը հակամարտության ներկայիս ռազմավարական նպատակների լայն շրջանակներում:

դ. Դիտարկել ինտեգրման խնդիրը որպես ներկայում տեղահանված մարդկանց կարիք, տեղահանված մարդկանց բարեկեցության ապահովումն այսօր չպետք է կանխորոշի հետագայում նրանց ապրելու տեղի ընտրությունը:

ե. Վերադարձի ու հատուցման անհրաժեշտությունն օրակարգային հարց դարձնել Հայաստանի ու Ադրբեջանի հասարակություններում և ընդգրկել այն կառավարման ու հաշտեցման ավելի լայն գործընթացներում:

Այս քաղաքական համառոտագիրը առաջարկում է հնարավոր ուղղություններ քննարկումների համար: Այն հիմնված է Ղարաբաղի կոնտակտ խմբի շրջանակներում հայ, ադրբեջանցի և միջազգային փորձագետների կողմից կատարված հետազոտության վրա:

Նախաձեռնությունը մեկնարկվել է 2010թ. Conciliation Resources-ի կողմից՝ աջակցելով Ղարաբաղյան հակամարտության շուրջ քաղաքականությանը համապատասխան գաղափարների առաջխաղացմանը:

Այս հրատարակությունը հնարավոր է դարձել Եվրոպական միության առատաձեռն աջակցության շնորհիվ: Համառոտագրում ներկայացված մտքերը չեն արտացոլում Եվրոպական միության կամ ՂԿԽ-ի անդամների դիրքորոշումները:

Հետազոտությունը, որի վրա հիմնված է քաղաքական համառոտագիրը, կարող էք գտնել հետևյալ հղումով՝ www.c-r.org/NK_IDP

Բոլոր նկարները © Հաշտեցման ռեսուրսներ, Լոուրենս Բրոտերս



Կազմի վրա. Երևանից հեռացած ադրբեջանցի փախստականը բողոքում է իր տան ավերման դեմ, որը ապամոնտաժում են “հանուն Բաքվի քաղաքային զարգացման”: